7370

Հ.Հ.Դ.

Ներքին կանոնադրություն

329.14
Հ-24

329.14
Ն-63
2545
2002

# ՆԵՐՔԻՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

(ժամանակաւոր)

ՀԱՅ ՅԵՂԱՓ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Վաւերացրուած 1904 Թ. դեկտ. ռայոնական ժողովում։

Հրատ. Ա.

ՈՍԿԱՆԱՊԱՏ

Հ. Յ. Դաշնակց. ազատ տպարան։

1905 Թ.

2010

329.14
Հ-24

# ՆԵՐՔԻՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

(ժամանակաւոր)

ՀԱՅ ՅԵՂԱՓ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Վաւերացրուած 1904 Թ. դեկտ. բայոնական ժողովում:

Հրատ. Ա.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՈՍԿԱՆԱՊԱՏ

Հ. Յ. Դաշնակց. ազատ տպարան:

1905 Թ.

2545

Հրատարակելով սոյն ներքին կանոնադրութիւնը որպէս ժամանակաւոր ուղեցոյց, խնդրում ենք Դաշնակցական մեր ընկերներին իրանց դիտողութիւնները ուղարկեն Կ. Կոմիտէին, որպէս զի դրանց հիման վրայ ապագայ ռայօնական ժողովը կարողանայ աւելի կատարեալ կանոնադրութիւն մշակել։

21181+

93448-62

## ՆՊԱՏԱԿ

1. Հ. Յ. Դ. նպատակն է բարեփոխել հայ ժողովրդի քաղաքական ու անտեսական ներկայ պայմանները թէ Տաճկաստանում և թէ Ռուսաստանում այն ուղղութեամբ, ինչպէս բացատրուած է Դաշնակցութեան ընդհանուր ծրագրի մէջ։

## ԿԱԶՄ

2. Հ. Յ. Դաշն. բարձրագոյն օրէնսդիր մարմինն է Ընդհանուր Ժողովը, որ կայանում է երկու տարին մի անգամ, իսկ կարևոր դէպքերում աւելի յաճախ։ Ընդհանուր Ժողովի մշակած ծրագրի սահմաններում գործում են Դաշնակցութեան բոլոր մարմինները։ Բացի Ընդհանուր Ժողովից Դաշնակցութիւնը ունենում է և Դաշնակցութեան Խորհրդի տարեկան ժողով և ռայօնական ու շրջանային ժողովներ։ Ռայօնական ժողովին մասնակցում են ամեն մի Կ. կոմիտէից և բիւրօյից մի մի ներկայացուցիչ և այն կոմիտէներից, որոնք կապուած են անմիջապէս բիւրօյի հետ, իսկ շրջանային ժողովին մասնակցում են շրջանի կոմիտէներից, և Կ. կոմիտէից մի մի ներկայացուցիչ։

3. Ենթակոմիտէներից և գիւղական շրջաններից ներկայացուցիչ հրաւիրելը թողնում է Կ. կոմիտէի հայեցողութեան։

## ԱՆՀԱՏ

4. Դաշնակցական անհատ համարւում են նրանք, որոնք միանուագ կամ պարբերաբար տալիս են որոշ տուրք կամ ցոյց են տալիս որոշ բարոյական աջակցութիւն: Դաշնակցական անհատները բաժանւում են երեք տեսակի. 1) համակրող, 2) նըպաստող 3) գործիչ:

Դաշնակցութեան վարչական կազմն է Ռուսաստանում. Խումբ, Ենթակոմիտէ, Կոմիտէ, Կենտր. Կոմիտէ, Կովկասեան Պատասխանատու Կ. Կոմիտէ և Բիւրօ:

## ԽՈՒՄԲ

5. Առնուազն եօթը դաշնակցականներ միանալով՝ կազմում են խումբ ինքնաբերաբար կամ շրջիկի միջոցով: Խմբերը բաժանւում են երկու տեսակի՝ Օժանդակ և Մարտական: Օժանդակ խումբը օգնում է կազմակերպութեանը նիւթական նպաստներով և այլ կարգի ծառայութիւններով:

Մարտական խումբը պարապում է զինավարժութեամբ և ամեն ժամանակ պատրաստ պիտի լինի գործի գնալու ըստ պահանջին:

Ծանօթ. I. Ամեն մի խումբ ունի իւր անունը կամ համարը:

Ծանօթ. II. Մարտական խմբերը ղեկավարւում են յատուկ կազմած զինւորական կանոնադրութեամբ: Ամեն մի խումբ գաղտնի քուէարկութեամբ ընտրում է իր միջից մի տարի ժամանակով խմբապետ և փոխանորդ-գանձապահ, ձայների երկու-երրորդի մեծամասնութեամբ:



6. Ձայնի իրաւունք ունի խմբի ամեն մի անդամ, ով որ կանոնաւոր յաճախում է ժողովներին և վճարում է իր տուրքը:

7. Նոր անդամ ընդունւում է խմբի մէջ երկու անդամի առաջարկութեամբ և երկու երրորդ մասի համաձայնութեամբ: Եթէ ուրիշ կուսակցութեան պատկանող ուզում է մտնել Դաշնակցութեան մէջ, պէտքէ նախապէս տեղեկութիւն ժողովել. արդեօք որպէս պատուաւոր չի հեռանում նա կուսակցութիւնից:

Խմբի անդամը խմբից հեռանալիս պարտաւոր է խմբին ներկայացնել հեռանալու յարգելի պատճառը:

Դաշնակցութիւնը լինելով համոզմունքի ազատութեան ջերմ կողմնակից, երբէք չի բռնանում իւր անդամների վրայ, երբ նրանք անկեղծ համոզմունքով հարում են այս կամ այն կուսակցութեանը:

8. Խումբը պարտաւոր է ամեն շաբաթ ժողով ունենալ և բացի իւր ընթացիկ հարցերից, կանոնաւոր կերպով զբաղւել հայոց պատմութեան և գրականութեան, հայ յեղափոխութեան անցեալի ու ներկայի և հայկական կեանքի այլ երևոյթների ուսումնասիրութեամբ:

Ծանօթ. III Բացի վերոյիշեալ հարցերից խումբը, եթէ պայմանները ներեն, կարող է ունենալ և այլ զբաղմունքներ (ինքնազարգացում, փոխադարձ օգնութիւն, աշխատանքի բիւրօ և այլն:)

Խմբի ամեն մի անդամ պարտաւոր է ազնիւ միջոցներով աջակցել կամակերպութեան ընդլայնացման և նրա նպատակների իրագործման, այսպէս ա) ճշտութեամբ ի կատար ածել կոմիտէի կողմից խմբերին տրւած պատուէրները և յանձնարարութիւնները. բ) Կանոնաւոր ամսական տուրք տալ և աշխատել ուրիշ ազբիւրներ ևս գտնել.

(հանդանակութիւն, վիճակախաղ, երեկոյթ և այլն․ խմբի համաձայնութեամբ և կոմիտէի, իսկ սրա չեղած տեղը, ենթակոմիտէի թոյլտուութեամբ ու հսկողութեամբ)․ դ) Յեղափոխական պրոպագանդա անել հասարակութեան զանազան խաւերում․ ե) Նոր խմբեր առաջ բերել։ ե) Կանոնաւոր կերպով յաճախել խմբի ժողովներին։ զ) Ամենախիստ գաղտնապահութիւն կազմակերպութեան գործերի վերաբերմամբ․ է) Կազմակերպութեան վերաբերեալ ամեն նորութիւն կամ կարևոր տեղեկութիւն անմիջապէս յայտնել խմբապետին, որ սա էլ, եթէ հարկ համարի, ենթակոմիտէի միջոցով հասցնի կոմիտէին։ ը) Նպաստել հայոց լեզուի և գրականութեան տարածման։ Թէ մարտական և թէ օժանդակ խմբի անդամները պարտաւոր են ըստ հնարաւորութեան ունենալ սեփական զէնքեր՝ գոնէ մի-մի ատրճանակ և սուր և նոյնը խորհուրդ տալ իրանց շրջապատողներին։ Միևնոյն ժամանակ պէտք է զինավարժուեն նշան դնելով և այլ միջոցներով։ Խմբի ամեն մի անդամ անմիջապէս ենթարկւում է խմբապետին, իսկ նրա բացակայութեան ժամանակ՝ նրա փոխանորդին։

Ծանօթ․ IV Դաշնակցութեան տուրքը ըստ որոշման Ընդհանուր Ժողովի՝ պէտք է լինի եկամուտի 2-10 տոկոսը։

Ծանօթ․ V Բանկ միջոցներով փող առնելը, խաղը արգելւում է ամենայն մի անդամի և ամենայն մի մարմնի։

Ծանօթ․ VI Խմբի անդամները նոր անդամներ գտնելով՝ պիտի առաջարկեն խմբին իր մէջ ընդունելու, իսկ եթէ տեղում տեղ չլինի, խմբապետը նոր անդամներից կ՛ կազմէ նոր խումբ, որը օրինական կը համարուի, երբ ենթակոմիտէն կը մտցնի նրան իր շրջանը, զեկուցանելով այդ մասին կոմիտէին։



Ծանօթ․ VII Առանց յարգելի պատճառների երեք անգամ յաջորդաբար ժողովից բացակայողը կամ երկու ամիս իրար վրայ չը վճարող անդամը ենթարկւում է տուգանքի կամ հեռացւում է խմբից։ Հեռանալուց յետոյ նորից ընդունվել կարող է ընդհանուր կարգով։

Ծանօթ․ VIII Գաղտնապահութիւնը կազմակերպութեան գոյութեան անհրաժեշտ պայմաններից մէկն է։ Շատ ա՛գամ կազմակերպութեան անզգոյշ անդամների բերանբացութեան շնորհիւ նոյնչափ վնասներ են առաջացել ու առաջանում, որչափ յայտնի մատնիչների մատնութիւնից։

Այդ անգիտակցաբար մատնիչները պակաս դատապարտելի չեն․ ուստի առաջարկւում է խիստ գաղտնապահ լինել և միշտ առաջնորդուելով մի կանոնով, այն է գաղտնիքն տալ ոչ ամեն մարդու, ում կարելի է, այլ միայն նրան, ում կարևոր է, և յայտնել ոչ ամեն բան, ինչ կարելի է, այլ այն, ինչ որ անհրաժեշտ է։ Կազմակերպութեան գաղտնիքը յայտնւում է անդամներին ոչ իբրև մասնաւոր մարդկանց, այլ իբրև կազմակերպութեան գործիչների․ ուստի և ոչ ոք իրաւունք չ՛պիտի համարի մասնաւորապէս յայտնել թէկուզ ամենամօտիկ բարեկամին․ նոյն իսկ խմբի գոյութեան մասին, անդամների և ներկայացուցիչների, ժողովի տեղերի մասին էլ ոչ ոք չ՛պէտքէ գիտենայ բացի անդամներից։ Երբեմն որևէ գաղտնիք յայտնւում է խմբի մէկ անդամին միայն որոշ յանձնարարութեան համար․ այդ դէպքում նա իրաւունք չունի գաղտնիքը իր խմբի միւս անդամներին յայտնելու։ Եթէ խմբի անդամներից մէկը պատրաստականութիւն է յայտնում մի որևէ ծառայութիւն մատուցանել կազմակերպութեան, այդ մասին նա պէտք է յայտնի միայն խմբապետին։

Խ մ բ ա պ ե տ։

9. Խմբապետի պարտականութիւնն է ա) յարաբերութիւն պահպանել ենԹակոմիտէի և խմբի մէջ, բ) հոգալ իւր խմբի ժողովների և յեղափոխական պրոպագանդայի մասին, այսինքն ամենաուշը երկու շաբաթը մի անգամ ժողով կազմել, զբաղուել խմբի հետ յեղափոխական բովանդակութիւն ունեցող գրուածքներով, խմբի գործունէութեան մասին զեկուցանել ենթակոմիտէին և ենթակոմիտէից ստացած լուրերը և կարգադրութիւնները յայտնել խմբին, յեղափոխական կեանքի նորութիւնները ժամանակին կարդալ («Դրօշակ» թերթը և ուրիշ յեղ. գրական.),

Գ ա ն ձ ա պ ա հ,

10. Գանձապահը պարտաւոր է. ա) գանձել խմբի ամսական տուրքը և այլ եկամուտները և ամեն ամիս ստուգելով ամբողջ խմբի հետ, յանձնել ենթակոմիտէին, ստանալով անդորրագիր Դաշնակցութեան Արևելեան Բիւրօյի կնիքով։

Կնքուած անդորրագիրը խմբին ցոյց տալուց յետոյ պարտաւոր են անմիջապէս ոչնչացնել պահելով նրա համարը ստուգելու համար Դրօշակի յայտարարութիւնը, բ) պահել կանոնաւոր հաշիւ։

11. Խմբապետը կամ խմբի ներկայացուցիչը ընտրելու և ընտրուելու մի ձայնի իրաւունքով մասնակցում է Ենթակոմիտէի ընտրութեան և այլ խմբապետական ժողովներին։

## ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԱՏԱՍՏԱՆ

12. Խմբի անդամների մէջ ծագած հասարակ թիւրիմացութիւնները վերացնում են խմբի ժողովներում, իսկ



լուրջ դէպքերում դատում է Ենթակոմիտէն երեք հոգուց բաղկացած ընկերական դատաստանով և վճիռը յայտնում է Կոմիտէին։

Ենթակոմիտէն իւր կողմից աւելի լուրջ և պատասխանատու դէպքերում դատը յանձնում է կոմիտէին։

13. Որևէ Դաշնակցական եթէ զեղծում գործելուց յետոյ քննութիւնը և դատը չվերջացած անցնում է ուրիշ կուսակցութեան կողմը, այնուամենայնիւ չէ ազատւում դատից և հասանելիք պատժից, եթէ վճռուի։ Այդպիսի դէպքերում, երբ քննութեան տակ գտնուողը յայտնում է, որ ինքը ուրիշ կուսակցութեան կողմն է անցել, Դաշնակցութեան տեղական մարմինը նախազգուշացնում է այդ կուսակցութեան տեղական մարմնին, որ դա քննութեան տակ է, որպէսզի յետոյ պատժի դէպքում այլ ևս կուսակցական տարաձայնութիւնների և տհաճութիւնների տեղիք չը լինի։

Խումբը կարող է նշանակել բարոյական պատիժ՝ նկատողութիւն, յանդիմանութիւն, խմբից հեռացում և դրամական տուգանք ոչ աւել քան երեք ռուբլի Ենթակոմիտէի հաւանութեամբ։

Ծանօթ. IX Ոչ կազմակերպութեան վերաբերեալ գործերի համար Դաշնակցականները դիմում են յատուկ Դաշնակցական Դատարանները, ուր նրանք գոյութիւն ունեն։

## ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆՆԵՐ

14. Առանձին ուշադրութիւն դարձնել հաւաքուելու տեղերի յարմարութեան վրայ։

Ժողովի տեղը ամեն մի անգամ պէտքէ նախապէս իմանայ, որպէս զի հաւաքուելու նշանակած ժամին ոչ ոք

ստիպուած չ՚լինի դրացիներից կամ ուրիշներից հարցնել:

Պէտքէ գալ նիստին առանձին առանձին առանց խմբվելու:

15. Խստիւ արգելել կողմնակի մարդկանց բերել նիստերին:

Չ՚հրաւիրել դասախօսներ առանց Կօմիտէի կամ Ընթակօմիտէի գիտութեան:

16. Կառքի կամ ձիաքարշի վրայ, փողոցներում, հրապարակական տեղերում, հասարակական հիմնարկութիւններում ըստ կարելոյն խուսափել խօսք բանալ առհասարակ խմբի կամ ընդհանուրի գործի մասին:

17. Աշխատել որ ժողովի ժամանակ աւելորդ վտանգաւոր թղթեր չ՚լինեն ժողովականների մօտ:

18. Աշխատել հաշիւներն այնպէս պահել, որ ոստիկանութեան ձեռքն ընկած ժամանակ ոչինչ չ՚պարզուէ:

19. Փոստով նամակներ գրելիս աւելորդաբանութիւն չանել ժողովների և այնտեղ խօսածների մասին և մանաւանդ տեղերի ու մարդկանց անուններ չը տալ.

Խոյս տալ կասկածի տակ գտնուած անձանց վտանգաւոր թղթեր պահելուց մանաւանդ զանազան անուններով և ազգանուններով:

20. Պահել միմիայն ամենաանհրաժեշտ նամակներն ու ձեռագրերը, մնացածը անպայման ոչնչացնել անմիջապէս, երբ կարեւորութիւնից կընկնի:

## Ը Ն Թ Ա Կ Օ Մ Ի Տ Է

21. Առնուազը 5 խումբ կամ 35 անդամը կարող են ունենալ իրենց Ընթակօմիտէն:

Ծանօթ. X Մի տեղ եթէ չկայ խմբերի պահանջած թիւը



Ընթակօմիտէ կազմելու համար, եղածները կպչում են կամ անմիջապէս Կօմիտէի կամ հարեւան Ընթակօմիտէի հետ, մինչև խմբերի պահանջած թիւը լրանայ:

Ծանօթ XI Բացառիկ դէպքերում եթէ մի տեղ կան շատ ցանկացողներ մասնակցելու, բայց պայմանները չեն ներում ժողովներ անելու և ընտրութիւն կատարելու, Կօմիտէն ժամանակաւոր կերպով նշանակում է Ընթակօմիտէ վստահելի անձաւորութիւններից համակրողների հաւանութեամբ:

22. Ընթակօմիտէն բաղկացած է 3-5 հոգուց ընտրուած մէկ տարի ժամանակով: Ընթակօմիտէն ընտրւում է խմբերի ներկայացուցիչների ժողովի կողմից:

Ընթակօմիտէ ընտրելու համար պէտքէ ներկայ գտնուեն առնուազը 5 խմբի ներկայացուցիչներ:

Ընթակօմիտէն որպէս անմիջական հսկող իրան ենթակայ խմբերի, աջակցումէ նրանց գործունէութեան յաջողութեան և պատասխանատու է իր Կօմիտէի առաջ: Նա միջնորդ է հանդիսանում խմբերի և Կօմիտէի մէջ:

23. Ընթակօմիտէի պարտաւորութիւններն են. ա) Աշխատել վառ պահել ժողովրդի մէջ յեղափոխական ոգին, պաշտպանել ժողովրդի շահերը և նպաստել հասարակութեան համերաշխ գործունէութեան, նոյնպէս և հարևան ազգութիւնների համերաշխութեան բ) Կազմել կարելիութեան չափով գրադարան յեղափոխական գրքերի (լեգալ թէ անլեգալ) և տալ օգտուելու խմբերին ու անհատներին:

24. Ամեն ամսի վերջին հաւաքել խմբերի տուրքերը և այլ եկամուտները և յանձնել Կօմիտէին, ստանալով անդորրագիր ու յանձնելով ըստ պատկանելոյն:

25. Ընթակօմիտէն պարտաւոր է աչալուրջ հետևել

իւր շրջանում տեղի ունեցող հասարակական յեղափոխական և հակայեղափոխական դէպքերին և դորանց մասին տեղեկացնել Կոմիտէին կամ իւր շրջանի շրջիկին։

Ենթակոմիտէն պարտաւոր է նոյնպէս աչալուրջ հետևել իւր շրջանում յեղափոխութեան անուան տակ կատարուող խաչագողութիւններին և անմիջապէս յայտնել Կոմիտէին։

Ծանօթ. XII Յեղափոխական գործիչները պէտք է ունենան կնքուած վկայական։ Առանց յանձնարարականի կամ կնքուած վկայականի յեղափոխութեան անունով փող հաւաքողներին կամ կարգադրութիւն անողներին պէտք է բռնել և անմիջապէս յայտնել Կոմիտէին։

26 Ենթակոմիտէն պարտաւոր է հսկել նոյնպէս խմբերի ու անհատների գաղտնապահութեան վրայ. գաղտնապահութեան դէմ մեղանչողներին պէտք է ենթարկել Ենթակոմիտէի, իսկ աւելի լուրջ դէպքերում Կոմիտէի դատին։

Ենթակոմիտէն պէտք է ունենայ իւր անունը և իւր խմբի կեղծ անուանական ցուցակը։ Նա բացի ամսական հաշուից, պէտք է տարին երկու անգամ վեցամսեայ տեղեկագիր և ընդհանուր հաշիւ ներկայացնի Կոմիտէին իսկ պատճէնը խմբերին։

Նդթակոմիտէն պէտք է աշխատի իւր խմբերի և անդամների մէջ ծագած թիւրիմացութիւնները վերացնել խաղաղ ճանապարհներով և բարդութիւնների առաջն առնել։

28 Ենթակոմիտէն պարտաւոր է լուրջ ուշադրութիւն դարձնել իւր շրջանում մայրենի լեզուի ուսուցման վերայ, ընթերցանութեան սէր զարթեցնել, մատչելի գրքեր տարածելով և դաւանափոխութեան դէմ մաքառել



պրօպականդայի միջոցով։

29 Ենթակոմիտէն իրաւունք չունի իւր եկամուտներից ծախսեր անելու առանց Կոմիտէի համաձայնութեան։

## ԿՈՄԻՏԷ

30 Իւրաքանչիւր շրջան կարող է Կոմիտէ ունենալ, եթէ առնուազը 5 Ենթակոմիտէ ունի կամ 25 խումբ։

31 Կոմիտէն բաղկացած է 5 անդամից և ընտրւում է Ենթակոմիտէների ներկայացուցիչների ժողովում Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցչի նախագահութեամբ և ներկայ եղող ձայների երկու-երրորդի մեծամասնութեամբ։ Ձայների բաշխումը թողնւում է Կոմիտէին։

Ծանօթ. XIII Ժողովը հրաւիրում է Կոմիտէն և վաւերական է, երբ ներկայ են ձայների երկու-երրորդ մասը։

Ծանօթ. XIV Պատգամաւորը իրաւունք չունի իւր ձայնը ուրիշին տալու, եթէ դրա համար նախօրօք չէ ըստացել իւր ընտրողների գրաւոր համաձայնութիւնը։

32 Կոմիտէն իւր ներքին տեղական գործերի մէջ անկախ է, իսկ ընդհանուր ժողովի նախագծած որոշ պարագաների մէջ, ինչպէս նաև վճռած ձեռնարկների գործունէութեան սահմաններում գործում է Կենտրոնական Կոմիտէի կամ նրա ներկայացուցչի հրահանգներով։

33 Կոմիտէի պարտաւորութիւններն են. ա) Աշխատել բազմացնել խմբերի և ենթակոմիտէների թիւը և հետևել, որ կանոնաւոր և արդիւնաւէտ լինի նրանց գործունէութիւնը, բ) Ամեն ամիս կանոնաւոր կերպով ստանալ

ենթակոմիտէներից եկամուտները և հաշիւները և յանձնել կենտրոնական կոմիտէին, ստանալով կընքուած անդորրագիր և հասցնելով ըստ պատկանելոյն։

գ) Աշխատել բացի Ենթակոմիտէների եկամուտներից գտնել և այլ աղբիւրներ, ինչպէս օրինակ. միանուագ հանգանակութիւն կնքուած թերթով, երեկոյթ, վիճակախաղ, աւետիս մանդալ և այլն։ դ) Հոգ տանել եկամուտների հաշիւը Կ. Կոմիտէի միջոցով պաշտօնական «Դրօշակ» թերթում տպագրել տալու իր ժամանակին։

ե) Աչալուրջ հետևել իր շրջանում յեղափոխութեան անունը շահագործող խաչագողներին և ամէն կերպ մաքառել նրանց դէմ։ Այդպիսի դէպքերում ծայրահեղ միջոցների դիմելու համար, պէտք է Կ. Կոմիտէի համաձայնութիւնն ունենալ։

զ) Աշխատել հարթել յեղափոխական գործունէութեան խոչընդոտները, առանց տեռորի դիմելու։

Ծանօթ. XV Տեռորի և շրջանից արտաքսելու իրաւունքը վերապահուած է միայն Կ. Կոմիտէին և Կովկասեան Պատասխանատու Կ. Կոմիտէին. հարկ համարուած դէպքում պէտք է նրանց դիմել պատճառաբանուած առաջարկութեամբ։

է) Կազմակերպել հնար եղածին չափ ընդարձակ գրադարան, համեմատաբար աւելի լուրջ և յեղափոխական գրքերից անխտիր թէ հայ և թէ օտար լեզուներով, որը և պէտք է նպաստէ յեղափոխական լուրջ պրօպագանդային։

ը) Ճշտութեամբ կատարել Կ. Կոմիտէի կարգադրութիւնները իր շրջանի մէջ։

թ) Ստանալ յեղափ. թերթեր, բրօշիւրներ և բանաւոր տեղեկութիւններ Կ. Կոմիտէից ու հասցնել Ենթա-



կոմիտէներին։

34. Կոմիտէի եւ և մուտքի թէ դրամի և թէ ինչքի հաշիւները պահում է Կոմիտէի գանձապահը Կ. Կոմիտէի ցոյց տուած ձևով։ Նա բացի ամսական հաշուից, պարտաւոր է տարին երկու անգամ ոչ ուշ, քան յունուարի 20-ը և յուլիսի 20-ը իր բոլոր անդամների ստորագրութեամբ կնքամեայ մանրամասն հաշիւ ու տեղեկագիր ներկայացնել Կ. Կոմիտէին։

Ծանօթ. XVI. Կոմիտէն իր գանձապահի հաշիւները քննելիս պէտք է ըստ կարելոյն գրաւոր դոկումենտներ պահանջի ծախքերի համար։

Կոմիտէն պէտք է միշտ պատրաստ լինի Կենտրոնակ. Կոմիտէի կամ Բիւրօյի բեմիզիային։

Ծանօթ. XVII Յանձնարարութեամբ եկող անծանօթ անհատներից կամ շրջիկներից պահանջել գրաւոր ապացոյց Կ. Կոմիտէի անպայման ճանաչուած ստորագրութեամբ կամ կնիքով։

35 Կոմիտէն իրաւունք չունի պաշտօնական բանակցութիւնների մէջ մտնել ուրիշ կուսակցութիւնների հետ։

36. Կոմիտէն իր անդամների միջից ընտրում է մի գանձապահ։

Կոմիտէն տարին մի անգամ ուղարկում է իր ներկայացուցիչը իր շրջանի պատգամաւորական ժողովին, ներկայ լինելու Կ. Կոմիտէի հաշուետուութեանը և մասնակցելու Նոր Կենդրոնական Կոմիտէի ընտրութեան մի ձայնի իրաւունքով, բերելով իր շրջանի կարծիքը։

37 Կոմիտէի մի ներկայացուցիչը մասնակցում է տեղական Կարմիր Խաչի վարչութեան նիստերին մի ձայնի իրաւունքով։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0040778